Արձանագրություններ Առևտրի Կենտրոնների Համար. Հավելված E

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 5/6/2021 առավոտյան 12:01

Կասեցված է՝ այլևս ակտիվ չէ

Վերջին թարմացումներ (փոփոխությունները նշված են դեղինով)

5/5/21.

- Թարմացվել են մաքրության եզրույթները՝ համապատասխանելու CDC-ի մաքրության ուղեցույցին:
- Հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի եզրույթները թարմացվել են՝ նշելու հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի օրենքները:

COVID-19 դեպքերի մակարդակը, հոսպիտալացումը և մահվան դեպքերը որոշակիորեն նվազել են և հաստատուն են թվում, բայց COVID-19-ը շարունակում է մեծ վտանգ առաջացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից և ձեռնարկություններից պահանջում է նախազգուշական միջոցներ ձեռնարկել և փոփոխել գործառություններն ու գործողությունները՝ տարածման վտանգը նվազեցնելու համար:

Լոս Անջելեսի Շրջանի՝Անվտանգ Տնտեսության Նահանգային Ծրագրի «Դեղին Մակարդակ» մուտք գործելու պատճառով այս արձանագրությունը թարմացվել է՝ վերացնելու որոշ տեղական գործունեության հատուկ սահմանափակումները: Առևտրի Կենտրոնների Օպերատորները պետք է զգուշորեն վարվեն և պահպանեն սույն արձանագրության պահանջները՝ իրենց բիզնեսում COVID-19-ի հավանական տարածումը նվազեցնելու համար:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը (LACDPH) հետևում է Նահանգային ուղեցույցներին, որպեսզի օգնի, որ առևտրի կենտրոնները, մոլերը և փոխանակման առևտրի կենտրոնները (swapmeets) և նրանց վարձակալող մանրածախ բիզնեսները շարունակեն մնալ բաց՝ ենթարկվելով փոփոխությունների համավարակի այս փուլում: Ստորև ներկայացված պահանջները նախատեսված են առևտրի փակ և բացօթյա կենտրոնների, նպատակային առևտրի կենտրոնների, բաց առևտրային կոմպլեքսների և աութլեթ-մեծ հանրախանութների (malls), ինչպես նաև շուկաների համար (հավաքականորեն՝ «Առևտրի կենտրոններ»): Առևտրի կենտրոնները պետք է համոզվեն, որ վարձակալները, ներառյալ մանրածախ վարձակալները և վաճառողները, իրազեկ են այն արձանագրություններին, որոնք վերաբերում են իրենց գործունեությանը: Այդ բիզնեսները («վարձակալներ և վաճառողներ») պատասխանատու են արձանագրությունների իրականացման համար, բայց առևտրի կենտրոններին խրախուսվում է նույնպես պահանջել իրենց վարձակալներից սույն արձանագրությունների կատարումը: Ի հավելումն նահանգապետի կողմից այս հատուկ մանրածախ բիզնեսների համար պարտադրված պայմանների, այս տեսակի ձեռնարկությունները պետք է հետևեն նաև Առևտրի Կենտրոնների համար նախատեսված սույն Ստուգաթերթի մեջ նշված պայմաններին:

Ընդհանուր առմամբ առևտրի կենտրոններում առավելագույն զբաղվածությունը սահմանափակվում է 75% առավելագույն զբաղվածությամբ՝ ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար: Փակ Ձեռնարկությունները, որոնք փակ մեծ հանրախանութների (mall), կամ փակ առևտրի կենտրոնի մաս են կազմում, նույնպես սահմանափակվում են առավելագույնը 75% զբաղվածությամբ:

Բոլոր մշտական և անշարժ բացօթյա նստատեղերը, որոնք բաց են հանրության համար, յուրաքանչյուր մշտական նստատեղի կողքին, կամ մոտակայքում տեսանելի վայրում պետք է ունենան ցուցանակներ, որոնք հաճախորդներին հիշեցնում են դիմակ կրելու, ֆիզիկական հեռավորություն պահպանելու և առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում չուտելու, կամ չխմելու պահանջների մասին: Առևտրի կենտրոնի կամ մոլի տարածքում գտնվող ընդհանուր բոլոր փակ տարածքները կարող են վերաբացվել այնպիսի զբաղեցվածությամբ, որը նույն տնային տնտեսության անդամ չհամընկնողների միջև թույլ կտա առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորության պահպանում: Առևտրի կենտրոնի տարածքում գտնվող բոլոր բացօթյա ժամանակավոր կամ շարժական սեղանները և աթոռները, որոնք չեն գտնվում նշանակված փակ կամ բացօթյա ճաշասրահում, *կարող են վերաբացվել առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա գտնվող սեղաններով, որոնք չափված են մեկ սեղանի աթոռի հետևից մինչև հարակից սեղանի աթոռի հետևը, մինչ հաճախորդները նստած են,* և սեղանի մոտ կարող են նստել ոչ ավելի, քան չորս հոգի: Հանրությանը/այցելուներին պետք է հիշեցնել, որ առևտրի կենտրոնի տարածքում գտնվելու ընթացքում, նշանակված ճաշասրահում չնստած ժամանակ չի կարելի ուտել, կամ խմել: Հանրությունը/այցելուները կարող են ուտել, կամ խմել միայն փակ և բացօթյա նշանակված ճաշասրահներում, որոնք համապատասխանում են Ռեստորանների Արձանագրության Հավելված I -ին: Նախանշված ճաշասրահներում սեղանները պետք է լինեն *առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորության վրա, որոնք չափված են մեկ սեղանի աթոռի հետևից մինչև հարակից սեղանի աթոռի հետևը, մինչ հաճախորդները նստած են:*

Առևտրի կենտրոնում տեղակայված ընտանեկան ժամանցի գործողությունները (օրինակ՝ բոուլինգ, երեխաների առանձին զբոսանքներ և այլն) կարող են վերաբացվել՝ համաձայն [Ընտանեկան Ժամանցի Կենտրոնների համար](#)նախատեսված Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության Արձանագրությունների:

Բոլոր վարձակալները պետք է հետևեն Հանրային Առողջապահության Վարչության (DPH) համապատասխան ոլորտի արձանագրություններին և բոլոր մյուս նահանգային և տեղական կիրառելի օրենքներին և հրահանգներին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ ըստ լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիության, ուստի թարմացումների համար անպայման հաճախակի ստուգեք Լոս Անջելես Շրջանի վեբ կայքը http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/:

Առևտրի կենտրոնի գործառություններին համապատասխանող լրացուցիչ արձանագրություններին նույնպես պետք է հետևեն.

- Անհատական Խնամքի Ծառայությունները
- Կինոթատրոններ
- Մարզասրահներ/Ֆիթնես Կենտրոններ
- Ռեստորանները
- Մանրածախ Հաստատությունները
- Բարերը

Այս ստուգաթերթը ներառում է.

(1) Աշխատավայրի քաղաքականություննն ու գործելակերպը՝ ուղղված աշխատողների առողջության պահպանմանը

(2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ

Կասեցված է այլևս կիրառելի չէ

(3) Վարակի վերահսկման ապահովման միջոցառումներ

(4) Աշխատողների և հանրության հետ հաղորդակցություն

(5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության միջոցառումներ

Պետք է հետևել այս հինգ հիմնական ոլորտներին, եթե ձեր հաստատությունը մշակում է որևէ վերաբացման արձանագրություններ:

Այս արձանագրության մեջ ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Առավելագույն զբաղվածությունը՝ ըստ Շինության Օրենսգրքի՝ _____

Հաստատության մոտավոր ընդհանուր քառակուսի ոտնաչափ տարածքը, որը բաց է հանրությանը՝ _____

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԿԵՏԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՁԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆԸ)

- Բոլոր նրանք, ովքեր կարող են տնային պայմաններում կատարել իրենց աշխատանքային պարտականությունները, ուղղորդված է անել այդպես:
- Խոցելի աշխատողներին (65 տարեկանից բարձր տարիքի և քրոնիկական հիվանդություններ ունեցող մարդկանց) հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որն ըստ հնարավորության կարելի է կատարել տնից, և նրանք պետք է քննարկեն ցանկացած հարցեր իրենց բժշկի, կամ մասնագիտական բժշկական ծառայության հետ, որպեսզի կարողանան հիմնված որոշումներ ընդունել աշխատանքի վայր վերադառնալու վերաբերյալ:
- Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևակերպվում են՝ մեծացնելու աշխատողների՝ տնից աշխատելու հնարավորությունները:
- Այլընտրանքային, փոփոխված, կամ հերթափոխով ժամանակացույցեր են հաստատվել՝ առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորության ապահովումը:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ ժամանակ կամ COVID-19-ով վարակակիր անձի հետ շփում ունենալու դեպքում չգնալ աշխատանքի: Աշխատակիցները գիտակցում են, որ անհրաժեշտ է հետևել Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե կիրառելի է: Աշխատավայրի բացակայության քաղաքականությունը վերանայվել և փոփոխվել է՝ ապահովելու, որ աշխատողները չտուժեն, եթե հիվանդության հետևանքով մնան տանը:
    - Աշխատակիցներին տրամադրվել է տեղեկություն գործատուի, կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների վերաբերյալ, որը աշխատողը իրավունք կունենա ստանալ, եթե էլ ֆինանսապես ավելի հեշտ կդարձնի նրա տանը մնալը: Տե՛ս հիվանդության հիմքով աշխատողին տրամադրվող արձակուրդի և COVID-19-ի համար աշխատողների փոխհատուցման կառավարության աջակցման ծրագրերի՝ ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես 2021-ի COVID-19 Հիվանդության Հետևանքով Լրացուցիչ Վճարովի Արձակուրդի Օրենքի ներքո:
- Իրականացվում են մուտքի ստուգումներ՝ նախքան աշխատակիցներին, կամավորներին, առաքող անձնակազմին և կապալառուներին կթույլատրվի աշխատավայր մտնել՝ համաձայն DPH-ի Մուտքի Ստուգումների ուղեցույցի: Մուտքի ստուգումները պետք է ներառեն ջերմության կամ դողդոջքի, հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, համի կամ հոտի նոր կորստի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով, կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
    - Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
    - Դրական Ստուգում (Թույլատրված չէ):

Կանցկված է այլևս միտարեալ չէ

- Եթե անձը լիարժեք պատվաստում չի ստացել COVID-19-ի դեմ[1] և վերջին 10 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidquarantine:
- Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների տակ, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covid isolation:

❑ Տեղեկանալու դեպքում, որ մեկ կամ ավելի աշխատողներ դրական արդյունք են ունեցել, կամ COVID-19-ի ախտանիշներ ունեն, գործատուն ունի պատրաստի ծրագիր կամ արձանագրություն՝ այդ անձ(անց)ին տանը ինքնամեկուսացնելու համար և պետք է անմիջապես ինքնա-կարանտին պահանջի բոլոր այն աշխատողներից, ովքեր աշխատանքի վայրում շփվել են այդ անձ(անց)ի հետ: Գործատուի ծրագիրը պետք է նախատեսի արձանագրություն, ըստ որի կարանտինացված բոլոր աշխատողները կստուգվեն, կամ հնարավորություն կունենան ստուգվելու COVID-19-ի համար, որպեսզի պարզեն, թե արդյոք աշխատավայրում եղել են այլ վարակման դեպքեր, ինչը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը՝ աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ:

❑ Այն դեպքում, երբ 14 օրվա ընթացքում աշխատավայրում հայտնաբերվել են 3 կամ ավելի դեպքեր առևտրի կենտրոնի աշխատուժի կամ առևտրի կենտրոնի մաս կազմող ցանկացած բիզնեսի շրջանակներում, գործատուն պետք է այդ խմբի վերաբերյալ զեկուցի Հանրային Առողջապահության Վարչություն (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով կամ առցանց՝ http://www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվել, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի հանրային առողջապահության գործերի կառավարիչ՝ զբաղվելու խմբակային վարակման դեպքի քննությամբ և օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը: Հանրային Առողջապահության Վարչությանը անհրաժեշտ կլինի հաստատության անհապաղ համագործակցությունը՝ որոշելու համար, արդյոք դեպքերի խումբը COVID-19-ի բռնկում է:

❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տես LAC DPH COVID-19-ի Դիմակների կայքէջը՝ http://ph.la county.gov/masks: Աշխատակիցները, որոնց բուժաշխատողները հանձնարարել են չկրել դիմակ, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի

[1] Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (Pfizer-BioNTech or Moderna) երկրորդ դեղաչափն ընդունելուց ≥2 շաբաթ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց ≥2 շաբաթ անց (Johnson and Johnson [J&J]/Janssen):

Կասեցված է, այլևս կիրառելի չէ

շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է օգտագործվեն: Բոլոր աշխատակիցները պետք է դիմակ կրեն, բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում ընդունված բացառությունը, որը վերաբերում էր աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատակիցներին, փոխարինվում է մինչև հետագա ծանուցում:

- ☐ Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը գերադասելի է ընդմիջման սենյակում ուտելուց, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը աշխատողներին ավելի մեծ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում: COVID-19-ի փոխանցումը ավելի հավանական է, որ տեղի կունենա այն ժամանակ, երբ աշխատակիցները միասին են, երբ դիմակ չեն կրում:
- ☐ Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
    - ○ Փակցնելով առավելագույն զբաղվածության ցուցանակ, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը և
    - ○ Փոփոխելով ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
    - ○ Սեղանները դնելով առնվազն ութ ոտնաչափ հեռավորության վրա և ապահովելով նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնելով կամ ժապավեններ փակցնելով՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնելով՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորելով այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ☐ Հնարավորության դեպքում ստեղծվել են բացօթյա ընդմիջման տարածքներ՝ հագեցած ստվերային ծածկոցներով և նստատեղերով, որոնք աշխատակիցներին հնարավորություն են տալիս 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել մյուսներից:
- ☐ Աշխատողներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխել իրենց դիմակները:
- ☐ Բոլոր աշխատատեղերը իրարից առանձնացված են առնվազն վեց ոտնաչափով:
- ☐ Ընդմիջման սենյակները, պետքարանները և այլ ընդհանուր տարածքները ախտահանվում են ստորև նշված հաճախականությամբ, սակայն ոչ ավելի քիչ, քան օրական մեկ անգամ հետևյալ

Կասեցված է՝ այլևս ակտուալ չէ

ժամանակացույցով.

- Ընդմիջման սենյակներ _____
- Պետքարաններ _____
- Այլ _____

- ❑ Վարձատրման և աշխատանքային ժամերի կանոնակարգերի համաձայն, ընդմիջումները կազմակերպվում են այնպես, որ ընդմիջման սենյակներում աշխատողների միջև միշտ հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- ❑ Ախտահանիչ և հարակից նյութերը հասանելի են աշխատողներին հետևյալ վայր(եր)ում.

_____

- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչները հասանելի են բոլոր աշխատողներին հետևյալ վայր(եր)ում.

_____

- ❑ Աշխատողներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ վերցնել՝ ձեռքերը լվանալու համար:
- ❑ Այս արձանագրության կրկնօրինակը բաժանվել է բոլոր աշխատողներին:
- ❑ Յուրաքանչյուր աշխատողի հատկացվում են իր սեփական պարագաները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայրը: Ընդհանուր օգտագործման առարկաների (օրինակ՝ հեռախոսներ, պլանշետներ, համակարգիչներ, սեղաններ, գրիչներ և այլն) համատեղ օգտագործումը ըստ հնարավորության հասցվում է նվազագույնի, նաև բացառվում:
- ❑ Սույն ստուգաթերթիկում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի աշխատանքային պայմաններին վերաբերող քաղաքականություններից, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են այդ տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի - նկարագրեք այլ միջոցառումներ.

_____

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Առավելագույն զբաղվածության կանոնների համաձայն առևտրի կենտրոններում (փակ և բացօթյա) և առևտրի կենտրոնի մաս կազմող մանրածախ ձեռնարկություններում առավելագույն զբաղվածությունը չպետք է գերազանցի 75%-ը՝ այն պայմանով, որ հաճախորդների և աշխատակիցների միջև միշտ կարող է պահպանվել 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Հնարավորության դեպքում, կայանատեղերը սահմանափակվում են՝ զբաղվածության հետագա առավելագույն սահմանափակումները պարտադրելու համար:
- ❑ Վարձակալները, որոնք ունեն արտաքին մուտք, որը հասարակությանը սովորաբար հասանելի է մեծ հանդիսասրահի (mall), կամ առևտրի կենտրոնի արտաքին մասից, կարող են շարունակել իրենց ընթացիկ փոփոխված գործողությունները՝ համապատասխան DPH-ի Արձանագրություններին՝ առավելագույնը 75% զբաղվածությամբ: Բացօթյա առևտրի կենտրոնները, ինչպիսիք են տոնավաճառները, պետք է վաճառողներին ապահովեն սեղաններով, վրաններով և այլ ցուցասարքերով՝ համապատասխան ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջներին, կամ էլ ապահովեն այլ անթափանց արգելապատնեշներով՝ դրանց փոխարեն:
  - Հաստատությունում հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է.

  _____

- ❑ Առևտրի կենտրոնը պետք է խստորեն և շարունակաբար հաշվի բոլոր մուտքերում հաճախորդների

Վավերացված է ԱԻՀԱՀ-ի կողմից

մուտքն ու ելքը, որպեսզի հետևի զբաղվածությանը՝ ապահովելու համար ներսի զբաղվածության սահմանների համապատասխանությունը: Մանրածախ առևտրի այն խանութները, որոնք անբավարար կերպով են հաշվարկ կատարում, կամ հաշվարկ չեն կատարում, կամ գերազանցում են թույլատրելի զբաղվածությունը, հանրային առողջապահության տեսուչի հայեցողությամբ կարող են ժամանակավորապես փակվել, մինչև այդ խնդիրները շտկվեն՝ համաձայն տարածքում հանրային առողջապահության տեսուչի որոշման: Հնարավորության դեպքում տրամադրեք եզակի, պարզորեն նշված մուտք և առանձին ելք, որպեսզի օգնեք պահպանել ֆիզիկական հեռավորությունը:

- Պատրաստ եղեք դրսում հաճախորդներին հերթ կանգնեցնել՝ միևնույն ժամանակ պահպանելով ֆիզիկական հեռավորությունը՝ ներառյալ կիրառելով տեսողական ազդանշաններ: Անհրաժեշտության դեպքում աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե առկա է մեկից ավելի մուտք), ով համապատասխան դիմակ է կրում, կարող է կանգնել դրսում՝ մոտ, սակայն ամենամոտ հաճախորդից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, որպեսզի հետևի զբաղվածությանը և ուղղորդի հաճախորդներին մուտքից դուրս վեց ոտնաչափ հեռավորությամբ հերթ կանգնել, եթե հաստատությունը, կամ առևտրի կենտրոնը հասել է զբաղվածության իր սահմանին:
- Եթե կիրառելի է, տեղի անվտանգության ծառայության աշխատողները հաճախակի հիշեցնում և խորհուրդ են տալիս հաճախորդներին և հանրությանը հետևել ֆիզիկական հեռավորության չափանիշներին և հիշեցնել հաճախորդներին և այցելուներին, որ չի թույլատրվում տեղում ուտել կամ խմել՝ բացառությամբ նշանակված ճաշասրահում:
- Առնվազն վեց (6) ոտնաչափ ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար ձեռնարկվել են միջոցառումներ՝ առևտրի կենտրոնի բոլոր հատվածքներում աշխատողների և հաճախորդների միջև ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար: Սա կարող է ներառել ֆիզիկական միջնապատերի, կամ տեսողական ցուցանակների օգտագործումը (օրինակ՝ հատակի վրա գծանշաններ, գունավոր ժապավեն կամ այլ նշաններ, որտեղ նշվում է, թե որտեղ պետք է աշխատողները և հաճախորդները կանգնեն):
- Մշակել և իրականացնել վերահսկվող ոտքով երթևեկության և ամբոխի կառավարման ռազմավարություններ, որոնք հնարավորություն են տալիս աշխատողների և հաճախորդների միջև պահպանել առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Սա կարող է ներառել, որ պահանջվի մեկ ուղղությամբ ոտքով երթևեկություն, և հաճախորդներին ուղղորդել տեսողական ազդանշաններով, ֆիզիկական հենարաններով և ցուցանակներով:
- Տրամադրել հստակ նշանակված մուտքեր և առանձին ելքեր, եթե դա հնարավոր է և տեղին է տարածքի դասդրի, որը թույլ կտա օգնել պահպանելու ֆիզիկական հեռավորությունը և աջակցելու ամբոխի վերահսկումը: Հնարավորության դեպքում դռները պետք է բաց լինեն, եթե դրանք ավտոմատ չեն բացվում և փակվում: Աշխատեք վարձակալների հետ՝ անհատական խանութներից դուրս հաճախորդների համար հերթերի համակարգեր ստեղծելու նպատակով, և միևնույն ժամանակ անհրաժեշտության դեպքում պահպանելով ֆիզիկական հեռավորությունը:
- Առևտրի կենտրոնների օպերատորները, մանրածախ վարձակալները և վաճառողները պետք է համագործակցեն՝ զարգացնելու խանութների մուտքի հերթերի համակարգերը, որոնք չեն խանգարի հետիոտի երթևեկությունը, կամ խախտի ֆիզիկական հեռավորության պահանջները: Նկատի ունենալ և խրախուսել մանրածախ վարձակալության հաստատությունների այլընտրանքային մուտքը՝ ներառյալ մուտքի համար թվային ամրագրումները և նախնական պատվերների ցուցումները:
- Առևտրի սայլերին, կամ կրպակներին պետք է թույլատրվի միայն աշխատել առևտրի կենտրոնների միջանցքներում, կամ քայլելու վայրերում, եթե դրանք չեն խանգարում ոտքի երթևեկության նորացված միջոցներին, կամ չեն խոչընդոտում ֆիզիկական հեռավորության

Կասեցված է՝ ակտիվ չէ

պահանջներին: Անհրաժեշտության դեպքում վերադասավորեք վաճառող սայլերը, կամ կրպակները, որպեսզի համոզվեք, որ հերթ կանգնելը չի խոչընդոտում ֆիզիկական հեռավորության պահանջներին:

- ❑ Բացօթյա առևտրի կենտրոնները, ինչպիսիք են տոնավաճառները, պետք է ապահովեն, որ վաճառողները տեղադրեն վաճառասեղանները, վրանները և այլ ցուցափեղկերը այնպես, որ համապատասխանեն ֆիզիկական հեռավորության պահանջներին, կամ էլ ապահովեն այլ անթափանց պատնեշների առկայությունը տեղանքում:
- ❑ Առևտրի կենտրոնները, մանրածախ վարձակալները և վաճառողները պետք է համագործակցեն՝ մշակելու առևտրի կենտրոնների գործունեության ծրագիր, որը հնարավորություն կտա վարձակալներին իրականացնել անվտանգ գործունեություն առևտրի կենտրոնի ներսում և դրսում և պահպանել Հանրային Առողջապահության Վարչության (DPH) բոլոր կիրառելի արձանագրությունները և նահանգային և տեղական օրենքները և հրահանգները:
- ❑ Առևտրի կենտրոնի կամ մոլի տարածքում գտնվող ընդհանուր բոլոր տարածքները կարող են վերաբացվել նվազեցված զբաղեցվածությամբ, որը բավարար կլինի նույն տնային տնտեսության անդամ չհանդիսացողների միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն ապահովելու համար:
- ❑ Փակ տարածքներում կենդանի ժամանցը չի թույլատրվում: Բացօթյա կենդանի ժամանցը պետք է հետևի Ռեստորանների Արձանագրությանը կամ Բացօթյա Նստեցվածությամբ Կենդանի Միջոցառումների Արձանագրությանը, Հավելված Z-ին, որը որ տարածվել կիրառելի է:
- ❑ Բոլոր ժամանակավոր կամ շարժական սեղանները ու աթոռները, որոնք գտնվում են փակ առևտրի կենտրոնի տարածքում, պետք է հեռացվեն հանրությանը հասանելի տարածքներից, կամ փակվեն հանրության համար: Հանրությանը/այցելուներին պետք է հիշեցնել, որ առևտրի կենտրոնի տարածքում չի կարելի ուտել կամ խմել՝ բացառությամբ նշանակված ճաշասրահում:
- ❑ Ֆիզիկական հեռավորության պահանջները իրականացվում են նաև բեռնաթափման գոտիներում, իսկ առաքման համար օգտագործվում են անհպում ստորագրություններ:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ HVAC համակարգը գտնվում է լավ, աշխատանքային վիճակում. առավելագույն հնարավորության չափով ավելացվել է օդափոխությունը: Արդյունավետ օդափոխությունը փոքր աէրոզոլային փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից մեկն է: Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքեր, արդիականացնել շինության օդային զտիչները, փոխարինելով դրանք հնարավոր ամենաբարձր արդյունավետության զտիչներով, ինչպես նաև կատարել այլ փոփոխություններ՝ ավելացնելու համար դրսի օդի քանակը և օդափոխությունը գրասենյակներում ու այլ տարածքներում: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության [Ներքին միջավայրում օդափոխության, ֆիլտրման և օդի որակի միջանկյալ ուղեցույցը](): Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխումը և ներսի օդի որակի այլ բարելավումները լրացնում և չեն փոխարինում պարտադիր պաշտպանություններին, ներառյալ դեմքի ծածկոցներ կրելուն (բացառությամբ բարձր վտանգի միջավայրերի, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), առնվազն վեց ոտնաչափ մարդկանց միջև հեռավորության պահպանմանը, ձեռքերը հաճախակի լվանալուն և գործողությունների սահմանափակմանը, որոնք համախմբում են տարբեր տնային տնտեսությունների մարդկանց:
- ❑ Հաստատություն ժամանող հաճախորդներին պետք է հիշեցնել, որ կրեն դիմակ առևտրի կենտրոնում և դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում, բացառությամբ, երբ ուտում/խմում են նշանակված ճաշասրահում: Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ տարիքի երեխաներին: Անհատները, որոնց իրենց բժշկական մատակարարը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ներքևի եզրին շղարշով, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, եթե նրանց վիճակը դա թույլ է տալիս: Շղարշը, որը կզակին համապատասխան է, նախընտրելի է: Միակողմանի փականներով դիմակները

Կասեցված Է՝ այլևս վավեր չէ

չպետք է օգտագործվեն: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դիմակ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրա:

- ☐ Իրականացվում է ախտանիշների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողէրոցքի դիտարկում և արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման, կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են նաև արվել հեռավար կամ անհատապես, կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով, կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշաններով:
  - Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
  - Դրական Ստուգում (Թույլատրված չէ):
    - Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել տարածք, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidquarantine:
    - Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների տակ, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidisolation.
- ☐ Երեխաների հետ հաստատություն մտնող հաճախորդները պետք է հետևեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն որևէ այլ անձանց, կամ իրենց չպատկանող որևէ իրերի դիպչելուց և կրեն դիմակ, եթե տարիքը թույլ է տալիս:
- ☐ Գործում են առանց հպման վճարային համակարգեր կամ, եթե հնարավոր չէ, վճարային համակարգերը օրական առնվազն մեկ անգամ ախտահանվում են: Նկարագրեք.

  ____

- ☐ Ընդհանուր և խիտ երթևեկության վայրերը և հաճախակի հպվող առարկաները (օրինակ՝ բազրիքները, վերելակների կառավարման վահանակները, դռան կլոր կամ սովորական բռնակները, վարկային քարտերի համակարգերը, վերելակների կոճակները, շարժասանդուղքների բազրիքները) ախտահանվում են աշխատանքային ժամերին օրական առնվազն մեկ անգամ՝ EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով՝ արտադրողի օգտագործման հրահանգներին համապատասխան:
- ☐ Աշխատատեղերը և ամբողջ հաստատությունը մաքրվում են առնվազն օրը մեկ անգամ, իսկ պետքարանները և հաճախակի օգտագործվող տարածքները/առարկաները՝ անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ: Առևտրի կենտրոնի աշխատանքային ժամերը փոխվել են՝ տրամադրելու բավարար ժամանակ կանոնավոր խորը մաքրման և արտադրանքի պահեստավորման համար:
- ☐ Հանրային պետքարանները պարբերաբար ստուգվում, մաքրվում և ախտահանվում են օրական առնվազն մեկ անգամ կամ անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ՝ EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով՝ արտադրողի օգտագործման հրահանգներին համապատասխան.
- ☐ Հասարակական խմելու ջրի շատրվաններն անջատված են և փակցված են ցուցանակներ, որոնք տեղեկացնում են հաճախորդներին, որ դրանք չեն աշխատում:
- ☐ Հաճախորդներին արգելված է օգտվել աշխատողների համար նախատեսված պետքարաններից:

Կասեցված է՝ այլևս ակտուալ չէ

- ❑ Հաճախորդներին հասանելի պետք է լինեն համապատասխան ախտահանիչ միջոցները՝ ներառյալ ձեռքերի ախտահանման միջոցները, անձեռոցիկները և աղբարկղները:
- ❑ Շինությունների ներսում գտնվող առևտրային կենտրոնի, կամ մեծ հանրախանութների (mall) փակ տարածքում գտնվող սննդի կետերի (food court) ճաշելու հատվածները կարող են բաց լինել առավելագույն զբաղվածության 50%-ով՝ համաձայն կիրառելի Շինության կամ Հրդեհային Օրենսգրքերի Զբաղվածության: Փակ և բացօթյա բոլոր ճաշասրահները պետք է համապատասխանեն Լոս Անջելեսի Շրջանի DPH-ի Ռեստորանների Արձանագրություններին՝ Հավելված I, ներառյալ բացօթյա և փակ տարածքներում ճաշելու հարմարությունները: Հանրությանը չի թույլատրվում սնունդ կամ խմիչք օգտագործել փակ մեծ հանրախանութների (mall), կամ առևտրի կենտրոնի որևէ տարածքում՝ բացառությամբ նշանակված ճաշասրահում:
- ❑ Ընտրովի. նկարագրեք այլ միջոցառումներ (օրինակ՝ ժամերի տրամադրում միայն տարեցների համար, խրախուսել առցանց պատվերները/պատվերները տեղում վերցնելը, խթանել ոչ ծանրաբեռնված ժամերի վաճառքը):

_____

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Սույն Արձանագրության կամ, եթե կիրառելի է, հաստատության տպագրած Լոս Անջելեսի Շրջանի COVID-19 Անվտանգության Համապատասխանության Վկայագրի կրկնօրինակը փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերում: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի անվտանգության համապատասխանության ինքնավկայագրման ծրագիրն ավարտելու համար այցելեք http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm: Հաստատությունները պետք է տեղում պահեն Արձանագրությունների պատճենը՝ վերանայման համար՝ ըստ պահանջի:
- ❑ Ցուցանակները, որոնք տեղակայված են առևտրի կենտրոններում, տոնավաճառներում և այլ վաճառքի կենտրոններում, հիշեցնում են հաճախորդներին պահպանել վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորությունը, դեմքի դիմակը մշտապես կրելու անհրաժեշտությունը, կանոնավոր կերպով ձեռքերի լվանալու կարևորությունը և հիվանդ լինելու, կամ COVID-19-ի ախտանիշներ ունենալու դեպքում տանը մնալու անհրաժեշտությունը: Տե՛ս Շրջանի DPH COVID-19-ի ուղեցույցի կայքէջը լրացուցիչ ռեսուրսների արիզեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար:
- ❑ Առևտրի կենտրոնի տարածքում փակցված ցուցանակները հաճախորդներին հիշեցնում են, որ փակ դռներով առևտրի կենտրոնի ներսում չի թույլատրվում ուտել կամ խմել, և որ սնունդն ու խմիչքները կարող են սպառվել միայն նշանակված բացօթյա ճաշասրահում, բացառությամբ նշանակված փակ ճաշասրահի սննդի կենտրոնում(food court) և նշանակված ցանկացած բացօթյա ճաշասրահներում:
- ❑ Առևտրի կենտրոնում փակցված ցուցանակները հաճախորդներին բացատրում են, թե որտեղ է գտնվում մատչելի ախտահանիչ միջոցների սարքը:
- ❑ Հաստատության առցանց կետերը (վեբ կայք, սոցիալական ցանցեր) տալիս են հստակ տեղեկություն խանութի աշխատանքային ժամերի, դիմակներ կրելու անհրաժեշտության, սահմանափակ զբաղեցվածության մասին, ինչպես նաև ցանկացած քաղաքականությունների մասին, որոնք վերաբերում են նախնական պատվերների, կանխավճարների, տեղում ստանալու և (կամ) առաքման և այլ համապատասխան հարցերի վերաբերյալ:

E. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՋԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

- ❑ Անհատական գնումների ժամեր են ստեղծվել խոցելի բնակչության, այդ թվում տարեցների և բժշկական խոցելի խմբերի համար, անհրաժեշտության դեպքում, գերադասելի է ամբողջական մաքրումից հետո:

Կասեցված է այլևս կիրառելի չէ

- ❑ Հաճախորդների / գնորդների համար կարևոր նշանակություն ունեցող ծառայությունները առաջնահերթ են դարձել:
- ❑ Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռավար կարգով, այժմ իրականացվում են առցանց տարբերակով:
- ❑ Միջոցներ են ձեռնարկվում՝ ապրանքների և ծառայությունների հասանելիությունը ապահովելու համար այն հաճախորդներին, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և (կամ) հանրային տարածքներում նրանց գտնվելը ավելի վտանգավոր է:

Վերոհիշյալ միջոցառումներում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառումներ պետք է նշվեն առանձին էջերում, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապնվել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի Կոնտակտային Անունը՝ ____________________ **Հեռախոսահամարը՝** ____________________

Վերջին Վերանայման Ամսաթիվը՝ ____________________

Կասեցված է՝ այլևս վավերական չէ